ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ **N** -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 346-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին» N 346-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության» կարգի 15-րդ կետից հանել «հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրության գործունեության լիցենզիա ունեցող» բառերը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի

Քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության թաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին» N 346-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնում սահմանված տեխնիկական զննության կտրոնին ներկայացվող պահանջներում հատուկ պաշտպանվածության պահանջ չկա, ինչպես նաև տեխնիկական զննության կտրոնը ներառված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 14-ի «Հատուկ պաշտպանվածություն պահանջող՝ պետական նշանակության փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N1459-Ն որոշմամբ հաստատված ցանկում, ուստի միայն հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից կտրոնների տպագրման պահանջը առաջացնում է լրացուցիչ սահմանափակում գնումների գործընթացին հնարավոր մասնակիցների համար։

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված որոշման ընդունումը։

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ